ՀՀ ԳԱԱ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համար հոբելյանական այս տարվա ընթացքում լրանում են նաև մեր մի շարք անվանի գիտնականների ծննդյան 100-ամյա հոբելյանները:

1943 թ., երբ կազմավորվեց ՀԽՍՀ ԳԱ-ն, նրանք ընդամենը 20 տարեկան էին. ոմանք Մեծ հայրենականի ռազմադաշտում էին, մյուսները դեռևս ուսանողներ էին: Հետագայում իրենց ողջ կյանքն ու գործունեությունը նրանք նվիրաբերեցին գիտությանը: Գիտական և գիտակազմակերպչական արգասաբեր գործունեության շնորհիվ նրանք արժանացան մեր երկրի գիտական բարձրագույն՝ ԳԱ ակադեմիկոսի կոչման: Վաստակաշատ գիտնականները շոշափելի ներդրում ունեցան ակադեմիական գիտության զարգացման գործում:

Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մ. Լ. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ս. Գ. ՄԱՑՈՅԱՆ

Վ. Վ. ԴՈՎԼԱԹՅԱՆ



Է. Մ. ՋՐԲԱՇՅԱՆ

Ռ. Ա. ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ

Փորձենք սեղմ ներկայացնել նրանց բովանդակալից կյանքի կարևորագույն դրվագները:

Կառավարման պրոցեսների հայտնի մասնագետ, պետական-հասարակական գործիչ Ֆադեյ Տաճատի Սարգսյանը (1923-2010) երկար տարիներ եղել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն (1963-1977), ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ (1977-1989), ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1989-1993): 1993թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ և այդ պաշտոնում աշխատել մինչև 2006թ.:

Նշանավոր ֆիզիկոս Միքայել Լևոնի Տեր- Միքայելյանը (1923-2004) աշխատել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, ԵՊՀ-ում, ավելի քան քառորդ դար ղեկավարել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը (1967-1994), որն այժմ կրում է նրա անունը:

Քիմիայի բնագավառի ճանաչված մասնագետներ Ստեփան Գրիգորի Մացոյանը (1923-2010) գլխավորել է ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտը (1967-1988), իսկ Վռամ Վաղինակի Դովլաթյանի (1923-2005) ողջ գործունեությունն ընթացել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում (ամբիոնի և լաբորատորիայի վարիչ):

Մեծանուն գրականագետ Էդվարդ Մկրտչի Զրբաշյանը (1923-1999) երկար տարիներ աշխատել է ԵՊՀ-ում, երկու տասնամյակից ավելի (1977-1999) եղել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի տնօրեն: Հայ գրականության պատմությանը նվիրված բազմաթիվ արժեքավոր մենագրությունների հեղինակ է:

Անվանի մաթեմատիկոս Ռաֆայել Արամի Ալեքսանդրյանը (1923-1988) աշխատել է ԵՊՀ-ում՝ որպես ամբիոնի վարիչ և մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի տնօրեն, Մաթեմատիկայի ինստիտուտի բաժնի վարիչ:

Մեր ակադեմիկոսների գործունեությունը գնահատվել է հավուր պատշաճի: Նրանք արժանացել են գիտական պատվավոր կոչումների, պետական մրցանակների և կառավարական բարձր պարգևների: Նրանցից յուրաքանչյուրն իր բնագավառում թողել է անջնջելի հետք և զբաղեցրել պատվավոր տեղ հայրենի գիտության պատմության մեջ:

«Գիտություն» թերթի խմբագրություն

Հ.Գ. Նման հոբելյանները լավագույն առիթն են հիշելու մեր գիտության երախտավորներին, արժևորելու նրանց վաստակը: Բնականաբար այս փոքր ակնարկում հնարավոր չէր ներկայացնել նրանց գիտական և գիտակազմակերպչական լայնածավալ գործունեության թեկուզ և փոքր մասը: Նման շնորհակալ գործի նախաձեռնողները, անտարակույս, պետք է լինեն մեր գիտական կազմակերպությունները և համապատասխան բնագավառների ճանաչված մասնագետները, որոնք առավել հաջողությամբ կարող են իրականացնել այն՝ իրենց պատրաստած նյութերը ժամանակին ներկայացնելով խմբագրություն: